

Էջ 210. տող 2.

«Այլ գինոյ և իւղ, ձու, ձուկն, պահիր, կոգի, կաղսի, բածիկ, շնուկ, կաթն, խեթ, և ձկնամորէ, ՚, Ուղղ. կազսի (կզսի), ժամիկ... խեղ կամ խիմ ? կրօի քամած լոռն է. ժամիկն փափրած պանիրն. խիմն. նոր ծնած անասնոյ կաթն զոր մակարդեւ լով շինեն՝ դալը:

Էջ 218. տող 36.

«Արդ զոր օրինակ եկեղեցին կոչեցաւ քահանային, ՚, Ուղղ. հարսն ? ամուսին ? Հմմտ. փեսայն Գրիստոս՝ հարսն եկեղեցին. իսկ քահանայն ունի զտեղի Գրիստոսի, որով եկեղեցին լինի նորա հարսն: Զ. Գ. ՆԱԼԱՊԵՏԻԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼՔ

— Անգլիացի ենթասպայ մը այսօրհետեւ պիտի չկարենայ բարձրանալ՝ եթէ յաջողութեամբ չանցնէ իր... առողջապահութեան քննութիւնները: Ամէն ենթասպայ իր գունդին առողջաբանութեան դաստառուն պիտի ըլլայ: — Զարմանալի՝ ուրիշ տեղ զօրավարները քաջութեամբ մեռնիլ կը սովորեցնեն զինուորներուն, իսկ Անգլիացիները... քաջառողջ ապրիլ:

— Պէտլինի արքունի գրատունը 1, 230, 000 հատոր ունի. Մոնաքոյինը՝ 1, 110, 000, Սթրասպուրկինը 900, 000, Կոթթինկայինը 536, 000, Լափցիկինը՝ 500, 000.

— Զուիցեբրոյ նաւատորմիդ՝ անտարակոյս՝ անգլիականին չափ գրաւած չէ աշխարհիս ու շաղրութիւնը. պէտք է խոստովանիլ սակայն թէ նա նաւական պատկառելի ոյժ մ'ունի, իր լինելուն համեմատութեամբ: 274 նաւ ունի, որոնցմէ ումանը 1200) ճամբորդ շրջեցնելու չափ մեծութիւն ունին:

— Սիմսընի հնարած ելեկտրական թնդաւ հօթը 10 քիլոմէր հեռու կը նստէ ամենէն ծանր գնդակը: Զուին ձայն և ծուխ. աւելի արժան է:

— Անգլիացիները իրենց պատերազմական նաւերուն մէջ՝ քարիւղ պիտի գործածեն՝ կաթսաները տաքեցնելու համար: — Այս որոշողութիւնը կարեւորութենէ զուրկ չէ Բագուի նաւթահանքերու տէրերուն համար:

— Ֆրանսացիք՝ իրենց ազգի նուազման առջին առնելու միակ միջոց մը գտած են. չամուսնացողները տուրքի ենթարկել, տուրքը բաժնել ընտանեաց հայրերուն՝ իրենց որդիներու թուին համեմատութեամբ:

Ա.Լ.Լ.Ա.Շ.Վ.Ե.Ր.Տ.Ի.Ն.Ե.Ր.Ը

ՊԱՏԱԶԱՏՔ ԿԱՄՄԱՐԱԿԱՆԱՅ

ԺԴ.

1700 թուականին մօտեր Ռայմի Սա. հակ իրամարտուն ուղղափառ հաւատքի մէջ ալ շատ անուանի էր և բարեպաշտ. ասիկա իւր մէկ աղջիկն Արթիկ հարսնացուցեր էր, ուր բոլոր գեղացիք յուղաւ փառութիւն դարձեր էին, և ննաչէն հոյաւ կայ եկեղեցի մ'ունէին, որն որ հիմա ալ կայ: Այն սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն յիշատակ թողեր է մէկ չայրի մը նալնի Սահակն, որ ամէն տարի պատարագ ըսուի իւր ննջեցելոց հոգւոյն. նոյն չայրին դեռ եւս կայ և յիշատակարանն ալ եկեղեցւոյ մէջ աւագանին մօտ քարի մը վրայ գրուած է: 1702 թուականին սկսաւ Հայոց հալածումը Կաթողիկոս զէմ՝ Ե. փրեմ և Աւետիք պատրիարգաց օրը, և օրէ օր սաստկանալ սկսաւ: 1707՝ Յովհաննէս Չմիւռնացի Հայոց պատրիարգ այս հալածանք վերջին աստիճան հասուց. և բանելի կոմիտաս քահանան աս թուականին մէջ նահատակվեցաւ. շատերն այս պատճառաւ տաճկացան, շատերն ալ ի ծառայութիւն թիոյ, այս է քիւրճիկը, գացին ի Կ. Պոլիս: Այս դառն հալածանք զրսի երկիրներն ալ հասաւ, որ ի Հինձը գիւղ Գամաարենց նալնի Սահակ, Կոստան, Նոր Պարոն և Խայիկ բռնվեցան, և չորս հատ կարենցի երեւելի իշխանաց և ուրիշներու հետ բանտ դրվեցան երկու ամիս, և ետքը տուգանք տալով ազատեցան:

1. Յովհաննէս Չմիւռնացի պատրիարքին կաթողիկոս Հայոց զէմ հալածանքը թշուառ 1707թուին սկսաւ Կ. Պոլիս, ստալէն գաւառներուն մէջ և մասնաւորապէս ի կարեն 1715ին հասն կը պատմէ Չմիւռն (Պատմ. հտ. Գ. եր. 761) ըսելով. «Կալան և ի կարեն քաղաքը զբաղուած ի քահանայից և յաշխարհականաց, և եղին ի կոճիկս, յորոց ոմանք մնան անդէն, և ոմանք յետ ժամանակաց գերան»): Բայց վերջիշեալ Գամաարենցը չիլիքի մահանիլ:

1715 թուականին, Յովհաննէս Գանձակեցի պատրիարքին օրը, այն հալածանք շարունակեց ամէն կողմ կաթողիկոսաց վրայ, և այս ազգին երեւելիք միշտ վտանգի մէջ էին՝ կամ բանտարկվելու կամ արսորվելու կամ ծանր տուգանք տալու։ Ասոր համար ի կարին քաղաք կրկին հինգ հոգի բռնեցին բանտ դրին, երկու հոգի ալ ի Հինձք գիւղ, որոց մէկ Գամսարենց նալճի Սահակն էր. բայց գեղին պէկն անոր ծերութեան վրայ գթալով, երկուքն ալ ազատեց, և անոնք որ բռնվեր էին՝ 1500 (դահեկան) տուգանք տուին։

1721 թուականին¹, Յովհաննէս կողող պատրիարքին օր, ի կարին խաչատուր անուն վարդապետ մը՝ Հայոց ազգին առաջնորդ եղեր է, այս չարագրգիտ մարդ կաթողիկոսներէն 24 անձինք բռնել կու տայ թէ՛ քաղաքէն և թէ՛ գիւղերէն. աս բռնուած անձանց մէջ էր նալճի Սահակ կամսար, որոնք 2500 դահեկան տուգանք մը տալով ազատեցան։ Ասոր վրայ շատ չէ անցեր որ հարիւր հոգիք ալ կրկին բռնել տուեր է, որոնք 1500 դահեկան տուգանք տուեր և ազատեց էին։ Չամչեան պատմութեան մէջ ալ այս բաներ կը յիշուին անորոշաբար։

ԺԵ.

1722 թուականին սոյն այս խաչատուր վարդապետ՝ կարնոյ բղեշխին կաշառը խոտտանալով, և կաթողիկոսաց վրայ մինչեւ մահապարտ ընելու չափ շատ զորպարտական անբաստանութիւններ ընելով, երեւելիներէն շատ անձինք բռնել և ի

բանտ դնել տուաւ, որոնք 3500 դահեկան տուգանք տալով հազիւ կարացին մահուանէ ազատել։ Այս բանտարկելոց մէջ էր Աստուածատուր² նալճի կամսարենց, որ այն վտանգէն իւր անձ ազատելէն ետքը, կ'երեւայ թէ ուխտեր է, կ'երթայ յիւրուաղէմ՝ Քրիստոսի տնօրէնութեան տեղերուն յայցելութիւն ընելու, և իր ուխտը կատարելու. ապա ողջամբ իւր հայրենիքը դառնալէն ետքը՝ իւր ծերունի հայրը մեռած ըլլալով, և ինքն ալ առեւտրական գործոց պարագայելուն համար, ալ Հինձք գիւղ չմնար. իւր ընկուցութիւնն ի քաղաք կը հաստատէ, ուր որ տուն և տեղ պատրաստ ունին եղբր յառաջուց։ Եւ անկէ ետքը ի կարին քաղաք թէ՛ Հայոց և թէ՛ կաթողիկոսաց երեւելի իշխանաց մէկն էր Մահտէսի Աստուածատուր և հոգակեալ, ինչպէս որ մինչեւ ցայսօր իւր որդւովք և թոռներով աւելի հոգակաւոր է, և իւր գերդաստանն իր անուամբ Ալլահ վերտեան կը կոչվի։ Այս այսպէս ըլլալով, ի կարին և այն կողմերը քիչ մ'ատենէ կը դադարի Հայոց հալածանքը՝ կաթողիկոսաց դէմ, որովհետեւ Հայեր իրենց մէջ մեծ մեծ աղմուկներ և խռովութիւններ ունէին թէ՛ ի կ. Պոլիս, թէ՛ յԵւթաժին, և թէ՛ յԵրուսաղէմ։ Աս խռովութեանց մէջ Սահակ Ահագին՝ կաթողիկոս՝ ի կարին կը մնայ և յԵւթաժին չկրնար երթալ, շատ խոշնդակներու պատճառաւ։ Այս միջոցներ 1752 կարնեցի սրբակաց Քերովրէ վարդապետը՝ կաթողիկոսաց մերձաւոր էր, բայց ծածուկ և ահուդողի մէջ. ի վերայ այսր ամենայն իւր վարուց սրբութեան համարա զինչ պատկառելի ըրեր էր օտար

1. Աս պարբերութեան և յաւորդ զլիսած խաչատուր վարդապետի գրգռութեամբ կարնոյ և շրջակայ գաւառներում կաթողիկոսաց դէմ եղած խռովութիւնները, բանտարկելութիւնները և կրած տուգանքները Չամչեան ետ հիշել 1721 և 1722 թուականներում և մանր պարագաներով կը պատմէ (սեւ Պատմ. հա. Գ. եր. 777-ձյ, բայց որովհետեւ Գամսարենց կամ Ալլահվերդեանքուն — անունը նաեւ այս ժրբակալուածներուն — անուանքը չը յիշեր, թերեւս ասոր համար հասկնալի է Բաճեան վարդապետի բրած ակնարկութիւնը, թէ «կը յիշուին անորոշաբար»։

2. Զիչդ սոյն այս թուականին ուրիշ ազգեցիկ անձ

մ'է ըստ Չամչեանի (Պատմ. հա. Գ. եր. 864) Երուսաղէմ ուխտ գաղտը, այն է՝ Ակնեցի Եղազազ ամիրան, որուն համար կ'ըսէ, թէ «էր պատուել և մեծաբեալ յոյժ առաջի ամենայն ազգաց եղելոց անդր սինքն ի կ. Պոլիս», և համբա նորա հոգակեալ ընդ ամենայն սեպի, որոյ հաւատար չէր ոք լեւել ի Հայոց մինչեւ ցայժմեայ» եւն, Ապա կը պատմէ անոր ծնունտութիւնը Գակոր պատրիարքին, և նոյն տարին զլիսատիւք հրամանաւ Թագաւորին՝ կարելի է արդեօք թիւրիմացութեան մը արդիւնք համարել Բաճեանի աւանդածը, թէ ընդհակառակ երկուստեք զուգարկալութիւն մը։

ազգաց առջև, ու կաթոլիկաց ժողովրդոց
ընտիր վարք, աստուածապաշտութեան եւ
ոսնդն, ներող համբերութիւն, գործքերու
բարութիւն, մոլութեանցմէ հեռու փախչել
և ասոց նման քրիստոնէականի օրինակ-
ներ այլազգեաց և Հայոց իսկ զարմանալի
էր ու փափաքելի միշտ փառանայք ժո-
ղովրդոց, տանուտէրք ընտանեաց և ծնողք
իրենց որդւոց դաստիարակ, քարոզիչ և
խրատիչ էին. որով օտար ազգաց մոլու-
թիւնք և չար սովորութիւնք տեղիք չէին
կրնար գտնալ կաթոլիկ ժողովրդոց և ոչ
մէկուն վրայ: Այսպէս էր ան ժամանակի
կաթոլիկաց ընթացք և վարք:

ԺԶ.

Մահտէսի Աստուածատուր Ամիրան եր-
կու հատ մանչ զաւակ և աղջիկներ ալ
ունէր. առաքինութեամբ և բարի վարուք
իր խոստովանող կենաց ընթացքը քրիս-
տոնէաբար խորին ծերութեան մէջ կա-
տարեց ի Հինձք գիւղ. որուն գերեզման
հոն էր՝ իւր գերդաստանին գերեզմանաց
կարգը: Այս դիւցազնոյն արժանի ժառանգ
և յաջորդ եղան կամսարական Մանուկ ա-
միրա և Մատթոս աղա Ալաշիվէրտեանք.
որոնք վաճառական գործոց պարտապելով
ըստ ժամանակին՝ հարստութեամբ և ա-
նուամբ շատ հոչակեալ էին կարնոյ մէջ:
1768 թուականին, Գրիգոր և Զարարիա
պատրիարքաց օրը, դարձեալ մեծ հալա-
ծուսն եղաւ կաթոլիկաց դէմ. և ի կա-
րին ութ իշխանք կաթոլիկացմէ յանկարծ
բռնվեցան և ի բանտ դրվեցան. շատ միջ-
նորդներ եղան ասոնց ազատութեան հա-
մար, բայց ճարը չը գտան: Եւ այս ութ
իշխանք ասոնք էին, Մանուկ Աղա Ալ-
լահվէրտեան, Առաքել Աղա, Մաղաբիա
Աղա, Գաապար Աղա, Նորտունի Աղա և
Աբրահամ Աղա, և երկուք ալ ուրիշ: Այս
դառն բանտարկութիւն՝ ետքը արքայա-
քի փոխվեցաւ. ուստի այս ութ իշխանք
վանի կողմեր արսորվեցան, ուր մէկ առ-
րին աւելի արքորանքի մէջ մնալով՝ մեծ
մեծ ֆեսաներու հանդիպեցան, և Մանուկ

ամիրան մինչեւ պարտքի տակ ալ ընկեր
էր. վասն որոյ արքորանաց տեղէն դար-
ձեր էր նէ, կամ ամօթուն կամ պարտա-
տեարց կասկածէն տունին մէջ ժամանակ
ինչ զոցվեր մնացեր էր: Բայց որովհետեւ
կրօնքի պաշտպանութեան համար այս փոր-
ձութիւնք և այսպիսի ձախորդութիւնք իր
գլխուն եկան, Աստուած ալ անակնկալ
յաջողութիւն մը տուեր էր իրեն, որ ոչ
միայն անբաւ հարստութեան տէր եղեր էր,
որուն նման օսմանեան տէրութեան մէջ
քիչ կը գտնվեր, այլ և հոչակաւոր անուն
ունեցաւ նոյն տէրութեան մէջ, կամսարա-
կան նախարարաց փոշիններէն նոր դիւցա-
զուն մ'ընծիւղելով ու ծաղկելով: Մա-
նուկ ամիրան ի կարին քաղաք բաւակա-
նապէս ծաղկած ու հոչակուած ստեղծ,
ի Հինձք գիւղ կաթոլիկ և հայ գեղացիք
մէկ այլազգի մը՝ քրիստոնեայ կնկան մը
տուն յաճախելուն համար՝ կը սպաննեն.
սպանողք կը փախչին, անոնց տեղ Մա-
նուկ ամիրային քեռին՝ իրեն գեղին մէջ
գլխաւորը՝ կը բռնեն ու կը ստիպեն որ
հաւատքը ուրանայ, որպէս զի մահուանէ
ազատուի: Երբոր ուրացութիւն չի յանձն
առնուր, իրեն մարդասպան դատակնիք
կու տայ դատին, և կը բերեն ի կարին քա-
ղաք կը կախն: Մանուկ ամիրան շատ
կ'աշխատի, բայց չի կրնար ազատել: Մա-
նուկ ամիրան՝ սեղանաւորութեան՝ այս է
սառափութեան՝ գործոց կը զբաղի և շատ
յաջողութեամբ ալ յառաջ կը տանի: Մէկ
կողմանէ կարնոյ այլազգեաց բարբարո-
սութենէն զզուած, և միւս կողմանէ իւր
գործոց համար ի կ. Պօլիս գտնվի իրեն
օգտակար դատելով, վերջապէս իւր ըն-
տանիքն ալ իւր Մատթէոս եղբոր ընտա-
նեաց հետ ի կ. Պօլիս կը փոխադրեն.
ուր որ հիմա իւր գերդաստանն կաթոլիկ
և հայ գերդաստանաց մէջ ամենէն աւելի
ծաղկեալ և հին և երեւելի է: Մանուկ
Ամիրան թէեւ ի կարնոյ իւր հայրենիքէն
տեղափոխութեամբ հեռացաւ, այլ հայրե-
նեաց սէրն միշտ իր սիրտը իր հայրե-
նեաց հետ կապեր էր. ուստի անպակաս
էր իւր բարեբարութիւնը՝ իր հայրենեաց

և հայրենակցաց վրայ, իւր ջանքը միշտ իր հայրենակիցները յառաջ քաշել և իր հայրենիքը պայծառացնելն էր. ուստի կարնոյ մէջ մեր կաթիլիկներէն շատերը յառաջ քաշել և երեւելի ըրեր էր՝ իւր բարերարութեամբ. Աղէկ չեմ գիտեր, բայց անանկ լսելու եմ, որ Մանուկ ամիրան ի կ. Պօլիս մէկ աքսորանք մ'ալ քաշեր է. բայց թէ ինչ պատճառի համար, աղէկ տեղեակ չեմ. վերջապէս ութսուն տարուան մօտ այս դիցազուն մարդ իր խոստովանող կեանքը կնքելով, զնաց առ Աստուած իր առաքինութեանց փոխարէն անանց պսակը առնելու. Եւ ապա իւր անուան, իր նախնի ազգատոհմին և գերդաստանին իւր երկու դիւցազուն որդիներ Նազարէկ և Արամսմ ամիրայք ժառանգ թողնելով այս երկրի վրայ:

ԺԷ.

Կամսարական դիւցազուն Նազարէկ ամիրա ծնաւ ի Կարին 1784. ծնողք ըստ ամենայնի փութաջան եղան զինքը կրթութեան մէջ մեծցնելու. ի Պօլիս գացած և տնեանին ինքն գրեթէ առան տարական կար, ուր ընտիր դաստիարակաց ձեռքով քրիստոնէական բարեպաշտ կրթութիւն և հումտութիւններ ստացաւ. իր ազնիւ նախնեաց պէս հայրենասէր ու բարեսէր էր. բնութեամբ կրակոտ ու զայրացկոտ էր, իր մտքին մէջ բան մը որոշէր նէ, դժուարաւ կը թողուր. ի վերայ այս ամենայնի զթած սիրտ ունէր և առատաձեռնութիւն կը ցցընէր միշտ. մեծագործութեան սիրող

էր, քաղաքական ու առեւտրական գործոց, մանաւանդ սեղանավաճառութեան քան զամէն գերագանց ու հմուտ էր. ահարկու տեսք ունէր, և տիրող բնաւորութիւն. Միտղոց իբրու անդրանիկն էր, և անդրանկութեան իրաւունք ունէր իր ընտիր գերդաստանին մէջ. Ուստի Մանուկ ամիրան իր ողջութեան ատեն, մանաւանդ պատճառի մը համար աքսորվեցաւ նէ, իր անդրանիկը Նազարէկ ամիրան իւր տեղը իր ստացուածոց և իր գործողութեանց տնտես կարգեր էր. որն որ իր Ազնուաշուք հօր մահուանէն ետքը բացարձակապէս մատակարար էր իւր հայրենի իրաւանց: Այս գերդաստանին մէջ կայ այս գեղեցիկ կարգադրութիւն, որ մինչև ցայսօր մեծեր յաջորդաբար մատակարար կ'ըլլան իրենց հայրենի տնտեսութեանց. Այս բարերար Ամիրան իր մահուանէն յառաջ ամենայն ջանիւք հետախնդիր էր ի Կարին՝ իւր հայրենի երկիրը՝ եկեղեցիին շինութիւն կատարելու, որ՝ գրեթէ շինութեան ամէն հարկաւոր միջոցները իր ողջութեան պատրաստներ էր, և իր մահուան ատենն ալ՝ ինչպէս լսելու եմ յարժանհատաց՝ իր ազնիւ կնքոր Արամսմ ամիրային կարնոյ եկեղեցւոյ շինութեան համար իւր փափաքը ու վերջին կամքը յայտնել էր. մանաւանդ որ այս մեծագործութեան յորդորիչ ունէին իրենց ազնուաշուք մայր՝ Երանուհի տիկինն, որ իր կեանքը չէր խնայել իւր հայրենեաց համար: Ուստի այս երկու հուշակաւոր հարազատից, այս է՝ Նազարէկ ամիրային և Արամսմ՝ Ամիրային մեծագործութիւնն է կարնոյ և

1. Ասոր որդի և յաջորդ եղած է հաւանօրէն Մանուկ պէյ Աւազկերտեան, զոր հեղինակ յիշած չէ հոս: Սա, այսինքն՝ Մանուկ Պէյ, ծնած է ի Կ. Պօլիս 1824 Յուլիանոս 3, մտած է Մուրաթեան վարժարան (ի Պաղովա) 1836, Ոգոստ 4, որպէս առաջին ուսանող, և ելած է 1838 Նոյ. 12: Սա եղած է կ'զրպէտ՝ Թաղմանէկով Պոյ և Վիրապէն սիրուն վարպետութիւնը: Ասոր մասին հետեւեալ տնայնայնէր լսած եմ մեր ծնրերէն. այսինքն Մուրաթեան վարժարանը զիւր մօր մտած էր, որուն որպէս տեսուչ էր Հ. Պետրոս Վ. Միհրանեան, պատանին իր տոհմի ազնուականութեանը չափազանցօրէն դիտաւ: Կցելով՝ խնդրած է որ միւս մանուկներուն հետ չի կենցաղավարէ: Հ. Պետրոս գուշակելով ըլլաւ ինք, կը պա-

տասխանէ. Շատ աղէկ, որդիս, մի՛ խօսիր: Բայց պատանին Մանուկ մէկ կողմանէ զգալով մեծ ժանձրոյթ, և միւս կողմէն ալ տաննելով իր զասնկեր մահկանաց զարար, թաղին խաղալու ու խնայել, և ալ չզիմանալով՝ որ մը ինքիմէն կ'երթայ և անոնց հետ կը խօսի և կը կատակէ այնուհետեւ:

Այստեղ յիշելու ենք նաեւ Գրիգոր Ազա, Մկրտիչ Ազա և Յովսէփեան Ազա Աւազկերտեաները, Գրիգոր ամուսնացած էր, կ'ըսուի Արթիւն էֆ. Քէօլէքեանի դստեր Թեւրեզին հետ. Մկրտիչ ամուսնացած չէր. Յովսէփէն էֆ. ամուսնացած էր Երեմիան Լուցիկա օրերդին հետ, ուսկից ծնած է երկու արու զաւակ, Ներսէս՝ ազնուաշուք և գեղեցիկ և Արսէն (?). երկուքն եւս վախճանած են:

կեղեցւոյ շինութիւն, և անոր շնորհեալ կալուածոց ու զարդոց առատաբաշխութիւն, որով իրենց հայրենի կալուածք՝ որ ի Հինձը գիւղ ունէին, և Կարնոյ մէջ եղեալ հայրենի տունը՝ սոյն եկեղեցւոյ մշտնջենական եկամուտ կապել. որոց նւաաստիւք հիմա քաղաքին աղքատքն ալ կը կերակրվին: Այս ամենին վկայ է Եկեղեցւոյ աւագ խորանին ճակատը գրուած արձանագիր այսպէս. «Յիշատակ անմահ տանն Ալլահվէրտեան»: Նազարէթ ամիրան իր հօր մեռնելէն ետքը, իւր գերդաստանին կառավարութիւնը գովելի կերպով կառավարելով, տւրութեան մէջ երեւելի բղէշխին հետ մէկ բանի մը համար կ'աւրուի ու անոր սաղբանօք Յունաստանի կողմն կ'աքսորվի. այս աքսորանքին մէջ իր հետ ընկերակից կը տանի Սէլվեան Յովհաննէս վարդապետ, որուն յաճմնեցին յետոյ Կարնոյ եկեղեցւոյ շինութեան վերակացութիւնը. և այս մեծանուն վարդապետին ձեռք շատ բարեղենք ըրին իրենց հայրենեաց, որն որ հիմա բարեբաղդաբար Կարնոյ թեմին եպիսկոպոս է, և միշտ փութալան այս բարեբարաց մեծագործութիւնը ծաղկեցնելու. և այս երջանիկ եպիսկոպոս միշտ գովութեամբ կը խօսի Նազարէթ ամիրային առատաձեռնութեան ու հայրենասիրութեան վրայ: Մոյն այն բարեբար ամիրային իր անցաւոր կենաց ընթացքը կը լնցունէ զեռ ծերութեան հասակին չհասած, թողլով իր սիրելիքն ի սուգ թաղծութեան: Ինքն կը վախճանի,

բայց իւր ազնութեան ժառանգ կը թողու իրեն ազնիւ որդիք և զստերք, որք են Ահտոն պէյ, Յովսէփ՝ Ալա, Պետրոս՝ Ալա, Թագունիզս տոտոս և Ահնիկ տոտոս. զանց կ'աւանեմ հոս նաեւ անոր ազնուաշուք վաղամտիկ որդիք ու զստերք, որոնց ումանք իրմէ ետքը թողին այս անցաւոր կեանքը: —

Ձեմ կրնար մոռնալ հոս տեղ խօսքիս կարգին մէջ յիշելու անոր աղքատասէր Գաթիկօ տիկնոջ անունը, որ ի հասարակ մայր աղքատաց կը կոչվէր. այս բարեպաշտ տիկինն այնքան առատաձեռն, զքան որ աղքատասէր և բարեպաշտ էր, որուն նման ու հաւասար շատ քիչ կը գտնվի հիմա: Աս տիկնոջ գթութեան պտուղներ ոչ միայն ի կ. Պոլիս եղեալ աղքատ վայելք են, այլ և ամէն տեղի և մահաւանդ այս մեր քաղաքի աղքատք, որոնք հիմա անոր հրգույն համար միշտ պաղատող են առ Աստուած: Նազարէթ ամիրային կողմանէ տանն պալազատ է հիմա իւր անդրանիկն Անտոն պէյ, ծանրաբարոյ վեհանձն, հայրենասէր ու կրօնասէր. այս բարեբարն անմոռաց ունի իր սրտին մէջ իւր հայրենեաց յիշատակը, ու իր հարց կառուցած Եկեղեցւոյ զարդերը և պայծառութիւններ ընել իրեն փառք կը սեպէ: Մոյն հայրենասիրութեան եռանդն կը վխտայ նաեւ այս մեծանուն գերդաստանին բոլոր սրտին մէջ: Եւս առաւել իւր նորարոգող ուղղույն Ալոյս պէյին, Յակովբիկ՝ Ալոյսին, Պոզուրիկ Ալոյսին, և

ծաղիկ հասակի մէջ՝ ի սուգ անմիթբար իրենց ծնողաց, Յովհաննէս Էփ. դեռ ողջ է, ծերունի իբր 75ամեայ, և է այսօր ամենեւ աւելի պատուաւոր ներկայացուցիչ Ալլահվէրտեան զեղապատանին, թէ՛ իր խելեմարդկայ առաքելութեան, թէ՛ կրօնասիրութեան և թէ հայրենասիրութեան համար:

1. Սա յամին 1853 մտած կ'աւանդուի ի Մ. վարձարան, և յամին 1855 Յունիս 14 ելած:

2. Սա անունացած էր Քրէճեան Աննա տիկնոջ հետ, ուսկից ծնալ յամին 1847 Մարտ 17 Յարութեան Ալլահվէրտեան, որ 1857ին մտած է ի Ռաֆ. վարձարան, և 1864 Յունիս աւարտած իր ուսմանք ընթացքը:

3. Այս և յաճորդ Ալլահվէրտեանները բոլորն ալ Մարտեան և Ռաֆայէլեան վարձարաններում և Միսիթարեանց ինստակալութեան ներքեւ ստած են իրենց ուսումն ու իրթութիւնը: Յակոբ մտած է Մ. վարձարան

(ի Պարիզ) 1855 Յունիս 10, և ելած 1857 Ռոքոս. 17. Իսկ Պոզուրիկ Ալլահվէրտեան 1857ին մտած է Մ. վարձարան և 1869ին ելած: Այս տեղ գիտել հոս տանք սակայն որ Մ. Ռաֆ. վարձարանի ուսանողաց ցանկերու մէջ կը յիշուին բաց ի Պոզուրիկն՝ որիչ երկու Պոզուրիկ Ալլահվէրտեաններ եւս, որոց մին՝ Պոզուրիկ որդիկ՝ 1844 Դեկտ. 28ին ծնած, 1857ին մտած է Ռաֆ. վարձարան և 1861ին աւարտած. իսկ միւսն 1855ին, Յունիս 11 մտած, ի Մ. վարձարան և 1860 Յունիս 16 աւարտած կ'աւանդուի: Այսպէս նաեւ յիշեալ ցանկերում կ'ընկն Նազարէթ Ալլահվէրտեաններ արժաւարտած մին, որոնց մին, այն է որդի Անտոն Պէյի, 1851ին Յունիս 1 ծնած, 1863ին մտած է Ռաֆ. վարձարան և 1868 Ռոքոս, աւարտած է. իսկ միւսը 1868 Նոյեմ. 27 մտած է ի Միսիթ. վարձարան և 1870 Սեպտ. 7ին ելած: Այս վերջինն մի որիչ Ալլահվէրտեան ըլլալու է

Նազարէք Աղային, որոց նուիրեր եմ սոյն այս իրենց նախնեաց Ազգաբանութիւնն և ճիւղագրութիւնը: Մեծայայտ եմ, որ իրենց նախնեաց դիւցազնութեան ազնիւ արինն անաղարտ կը պահեն իրենց երակներու մէջ, և կը ջանան իրենց ընտիր գերգաստանը միշտ ազնիւ պահել դարէ ի դար բերաւոր տարիներու մէջ:

Այսքան ինչ համառօտ կերպով նախնեացդ պատմութիւնը մինչեւ Զեր օրը հասցնելէս ետքը, նոյն համառօտ կերպով ասկէ վար Շաղագոմ գաւառին ստորագրութիւնը ընեմ՝ Զեր ազնիւ մտքին զուարճութիւն մ'ու զքօսանք մը տալու համար:

ՍՈՐՈՒԳՐՈՒԹԻՒՆ ԵԱՂԱԳՈՍ ԳԱՒԱՌԻ

ԺԸ.

Շաղագոմ կամ Շատգոմ գաւառ՝ որ հիմա Թորթում կ'ըսուի, Կարնոյ արեւելեան հիւսիսի կողմն կ'իյնայ, Կարինէն տասն և երկու ժամու չափ հեռու է իր հարաւային կողմն է Պարայ լեռ (քիթէն լեռը) վրան դէպ իւր արեւելքը թաշափայտի լեռան գօտին է (որ տուրիս տաղի կ'ըսվի). աս լեռան գլուխ երկու փոքրիկ լճեր կան, որոնց մէկն թաշափայտի նշանաւոր լիճն է, ուխտատեղի, և միւս Նոր շէնի գիւղին վրայ, որուն մէջ կարմրախայտ (ալապալըք) ձուկ շատ կ'ըլլայ. և այս լեռներու վրայ կը զտնուին վայրի այծեամներ, վայրի ոչխարներ, կիճն և այլ ուրիշ պատառող զագաններ: Երեք ձորի մէջ է այս բոլոր գաւառ, ու կ'ըսուի կցդայ, թախու, և Ռտոք: Ռտոքի արեւմտեան կողմն է Վեբրիկ լեռան գօտին, և այնպէս կարգաւ կու գայ թախուայ լեռ, և Հարկեորի (՝) լեռը, որոնք բոլորն ալ ան-

տառապատ են՝ չամ ծառերով և ուրիշ տեսակ տեսակ ծառերով: աս լեռներու վրայ ալ վայրի կենդանիներ շատ կան, և այս լեռներ 16 ժամ հեռու են Կարին քաղաքէն: Այս երեք ձորակներէն ալ մէկ մէկ գետակներ կը վազեն, որոնց մէջ կարմրախայտ ձուկին շատ ազնիւր կ'ըլլայ: Գետակներու ջուր շատ անոյշ, ափունք կանաչագարդ ու ծառաւետ. օղը առողջ, պարտէզներով և պտղաբեր ծառերով լեցուն, անանկ որ Կարնոյ քաղաքին պարտէզն կը կոչվի այս գաւառ, որուն վերի կողմերը Թուր, կեռաս, խնձոր, տանձ, ծիրան, սերկեւիլ, դեղձ, հուն, զգեար և այլ ասոնց նման պտուղներ այնքան շատ կ'ըլլան, որ Կարնոյ քաղաքին և իւր շրջակայից բնակիչները կը կշտացնեն կոր, և վարի կողմերը՝ խաղող, Թուզ, ընկոյզ, ձիթապտուղ, դամն, նուշ, շուր, բրինձ և բամպակ և այլ նման պտուղներ ալ կ'ըլլան: Առատապէս, գարի, ցորեն, հաճար, կորեկ, և այլ նման բուսեր կը ցանկին և ըստ ժամանակին շատ աղէկ կ'ըլլան: Որովհետեւ տեղին կլիմայն բարեխառն է, ոչ շատ տաք և ոչ շատ ցուրտ, տարւոյն ամէն եղանակներն իրենց բուն յատկութիւնները կը պահեն: Այս գաւառին լեռնոտ տեղերն ալ ամայի չեն, կաղնի, ցրդի, գիւհի, և այլ ուրիշ տեսակ ծառերով զարդարուն են: Առաջի գարնան զքօսալից տեսարան մ'է մարդկանց, լեռներու, հովիտներու ձորերու և ծառերու կանանչ ու գունագեղ ծաղկանց մէտ մէտ ծփալ արեւուն պայծառութեան մէջ, գեփիւռի հովերու առջեւ՝ ծովուն հանդարտաշարժ ալիքներու նման: Պաղ և զու վացուցիչ գետակներ լեռներէն ի վայր հոսելով, իրենց արծաթափայլ ալիքներու փայլուն տեսութիւն՝ անդադարձութիւն մը կը բերեն արեւուն շող ճաճանչներու, ու անշու խորոշմամբ ու դշխմամբ անցաւորաց լսելիքը կը զուարճացնեն:

Վերը յիշած երեք ձորակի գետակներ ճիշդ վար երթալով՝ իրար կը խառնվին ու մէկ տեղ լճակ մը կը ձևացընեն. և այն լճակին բերնէն զարմանալի ջրվէժ մը

հեղիակիս յիշատակեմ զուր, բայց յայտնի չէ թէ վերեւ յիշատակեալ Ալաշկէրտեան ազաներն որո՞ն որո՞ն էր: